15 715

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«09» 12 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0185-22

Ձեռնարկողը՝ «ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ
ք.Երևան, Ռոստովյան 9

Գործունեությունը՝ **Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**
Վայոց ձորի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 12 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ № 0185-22

<09> 12 2022թ.

Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ «ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Հայտ/, Ծրագիր
Գործունեությունը՝ «Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, բն. Վարդահովիտ

Ներածական մաս. Վարդենիսի բազմամետաղների հանքերևակումը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզում, Վարդենիս լեռնագագաթից հարավ, Վայոց ձորի լեռնաճյուղավորման հյուսիսային և Վարդենիսի լեռնաշղթաների հարավային լանջերի միջև՝ 2430- 3250մ բացարձակ բարձրությունների վրա: Հանքերևակման շրջանի տարածքը ներկայացնում է տիպիկ լեռնային տարածք, խիստ կտրտված ռելիեֆով: Տեղանքի հիմնական լեռնազանգվածները հանդիսանում են Վարդենիս (3522.2մ) և Քաչալսար (3522.2մ) լեռները, որոնց փեշերին տարածվում է հանքերևակման տեղամասերը: Հանքերևակման կենտրոնի աշխարհագրական կոորդինատնեն են Գրինվիչից հյուսիսային լայնության - 39° 58'32"B, արևելյան երկայնության - 45°33'11"C:

««ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից հայցվող հանքերևակման տարածքը տեղակայված է Գետիկվանք գյուղից հյուսիս-արևելք, Վարդահովիտ բնակավայրի վարչական տարածքում, Եղեգնաձոր քաղաքից 40կմ դեպի հյուսիս և զբաղեցնում է 94 կմ^2 (9399.3հա) մակերես:

Աշխատանքների իրականացման նպատակ է՝ հանքային դաշտի սահմաններում ինչպես նախկինում իրականացված աշխատանքների, այնպես էլ ծրագրով 2022-2025թթ. նախատեսված հանքերևակման սահմաններում կատարված աշախատանքների արդ-յունքներով տալ տեղեկատվությունը Վարդենիսի բազմամետաղների երկրաբանական կառուցվածքի, հանքայնացված գոտիների և հանքերակների ձևաբանության ու տեղադրման տարրերի, օգտակար հանածոյի նյութական կազմի, որակի մասին, ինչպես նաև տալ առանձին տեղամասերիի հեռանկարային գնահատականը և հիմնավորել մանրազննին հետախուզական աշխատանքների նպատակահարմարությանը:

Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տարածքում «ԳԵՈՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ կողմից 2012-2019 թթ կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների տվյալներով առանձնացվել է տարբեր հանքայնացման տիպերով հեռանկարային տեղամասերը: «ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին հասանելի է Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տարածքի վերաբերյալ Հանրապետական Երկրաբանական Ֆոնդում առկա երկրաբանական ուսումնասիրության նպատակով բոլոր կատարված աշխատանքների արդյունքները և հաշվետվությունները:

Ընկերության կողմից նախատեսված որոնողագնահատման աշխատանքները կիրականացվեն՝ մինչև 2մ խորությամբ վերգետնյա լեռնային փորվածքների, սյունակային հորատանցքերի, երկրաֆիզիկական, երկրաքիմիական աշխատանքների,

որոնողահանույթային երթուղիների միջոցով և նմուշարկման զուգորդմամբ՝ նպատակ ունենալով տալ որակական ու քանակական գնահատական հայտնաբերված ոսկու և բազմամետաղների պաշարների վերաբերյալ:

Միաժամանակ նախատեսվում է առանձնացնել հանքերևակման հեռանկարային տեղամասը, հետագայում մանրակրկիտ հետախուզում կատարելու և գնահատելու համար:

Ընկերության կողմից ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքի ծայրակետերի կոորդինատները ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են.

N	X	Y
1	4419074	8539842
2	4420410	8539600
3	4420842	8539147
4	4421039	8539215
5	4422000	8538079
6	4423227	8538978
7	4423621	8539059
8	4424918	8538087
9	4425499	8538135
10	4426203	8540916
11	4427798	8542463
12	4428718	8543360
13	4428244	8544735
14	4428364	8545343
15	4428672	8545554
16	4428847	8545557
17	4429101	8545328
18	4429722	8545580
19	4429733	8545812
20	4430956	8546022

N	X	Y
21	4431192	8547640
22	4430060	8548586
23	4429786	8550590
24	4426668	8551638
25	4424921	8551442
26	4425776	8549591
27	4424604	8548130
28	4421958	8547870
29	4421560	8547509
30	4420818	8547112
31	4420188	8545434
32	4419211	8545084
33	4419408	8543483
34	4419074	8542457
35	4420779	8542171
36	4421103	8542259
37	4421064	8542557
38	4420850	8542518
39	4420735	8542440

Բացառությամբ՝ Ծաղկահովիտի բազալտի հանքավայրի տարածքի, որի կոորդինատներն են.

Ծաղկահովիտի բազալտի հանքավայր		
N	X	Y
1	4421113,9555	8542262,0927
2	4421064,2010	8542556,9177
3	4420850,4226	8542518,4606
4	4420734,5343	8542439,5809
5	4420778,6599	8542171,2072

Տեղամասերը ներկայացված կոորդինատներով համադրվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի համայնքային սեփականության և քաղաքացու սեփականության գյուղատնտեսական նշանակության արոտավայրերի հետ:

Շրջանն ունի բարդ հիդրոգրական ցանց: Տարածաշրջանի հիմնական ջրային երակներն են հանդիսանում Եղեգիս և Արփա գետերն իրենց բազմաթիվ վտակներով: Շրջանում առկա են նաև ժամանակավոր բնույթ ունեցող գետեր, որոնք սնվում են ձնհալից և անձրևային ջրերից: Հանքերևակման շրջանում հայտնի է Սողանլու գետն իր բազմաթիվ վտակներով, որն էլ հոսում է տեղամասերի տարածքով: Հանքերևակման շրջանը հարուստ է բնական աղբյուրների ելքերով, ապահովելով տարածաշրջանում ինչ-

պես տեխնիկական, այնպես էլ խմելի ջրի պահանջարկը (Սողանլու գետի ու նրա վտակների, ինչպես նաև սառնորոկ աղբյուրների հաշվին):

Ուսումնասիրության աշխատանքները կիրականացվեն 2 փուլով: 1-ին փուլը կընդգրկի որոնողագանահատողական աշխատանքների կատարումը, որի ժամանակ հանքային մարմինները կուսումնասիրվեն մակերեսային փորվածքների և հորատանցքերի միջոցով՝ զուգորդելով երկրաֆիզիկական և երկրաքիմիական աշխատանքները: Վեջիններիս արդյունքներով կտրվի օգտակար հանածոների գնահատականը P կարգով: Իսկ 2-րդ փուլը նախատեսվում է սկսել 1-ին փուլի աշխատանքների դրական արդյունքների առկայության դեպքում, որի ընթացքում հետախուզական ցանցի խտացման միջոցով կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկ՝ C_1 և C_2 արդյունաբերական կարգերով:

Տեղամասի 1:10000 և 1:5000 մասշտաբի երկրաբանական քարտեզների կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթի աշխատանքներ՝ բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման վայրերի ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ: Երկրաբանական և տոպոգրաֆիկական հանույթային աշխատանքները կատարվելու է կապալառու ընկերության կողմից տախոմետրով և դրոնով:

Ծրագրով նախատեսված երկրաքիմիական ուսումնասիրությունները կկատարվեն 94 կմ^2 մակերեսի վրա՝ գետային նստվածքային և հողի նմուշնարկման միջոցով: Գետային նստվածքային նմուշնարկման համար նախատեսվում է վերցնել 100 նմուշներ, որոնց արդյունքից ելնելով կառանձնացվեն տեղամասեր, որոնցում վերցվելու է 4200 (4000 նմուշ+200 հսկողական) հողի երկրաքիմիական նմուշներ, որոնց սկզբնական քաշը կընդունվի մինչև 2կգ: Նմուշներում քիմիական տարրերի պարունակությունները կորոշվեն «ALS» միջազգային անկախ լաբորատորիայում: Լաբորատոր հետազոտությունների արդյունքներով և հատուկ համակարգչային ծրագրերի կիրառմամբ կազմվելու է երկրաքիմիական անոմալիաների քարտեզներ՝ տարբեր էլեմենտների և նրանց կոմպլեքսների համար:

Տեղամասում նախատեսվող մագնիսական վերգետյա հանույթի աշխատանքները կիրականացվեն երկրաքիմիական անոմալյաների տարածքում, նախորոք տեղանշված հողի հետախուզագծերով: Մագնիսական հանույթի պրոֆիլների միջև հեռավորությունը կկազմի 200մ: Նախատեսվում է օգտագործել «GSM-19» մակնիշի կամ համանման մագնիտոմետր, որը ավտոմատ կերպով գրանցում է բնական մագնիսական դաշտի արժեքները յուրաքանչյուր վայրկյան և այն կապում «GPS» համակարգի կոորդինատների հետ: Մագնիսական հանույթի վերջնական ծավալը կկազմի 200.000 գծ.մ: Աշխատանքների արդյունքներով կկազմվի մագնիսական դաշտի քարտեզներ տարբեր կարգավորումների կիրառմամբ: IP մեթոդով հանույթը նախատեսվում է կատարել վերգետյա մագնիսական հանույթային ստացված անոմալիաների տարածքում՝ նույն պրոֆիլներով, որոնցով որ մագնիսական հանույթն է կատարվելու: IP պրոֆիլների երկարությունը կկազմի 50000 գծ.մ: Նախատեսվում է կիրառել դիպոլ-դիպոլ մեթոդը՝ օգտագործելով «GDD 5W 32 channel» գործիքը: Գործիքի սնուցումը կկատարվի 3ԿՎ հզորության հոսանքի բենզինային գեներատորի միջոցով: Նշված աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Ստացված տվյալների համակարգչային ծրագրերի միջոցով վերլուծվելու և կազմվելու են համապատասխան քարտեզ սխեմաները: Երկրաքիմիական, վերգետյա մագնիսական և IP հանույթների արդյունքները կենթարկվեն կոմպլեքս վերլուծության և համադրության, ինչի արդյունքում կառանձնացվեն հեռանկարային տեղամասեր՝ նշանակալի հանքայնացման առումով,

որոնց վրա և նախատեսվելու են կատարել հորատման աշխատանքները: Վերլուծության, հորատման նախագծային և նախապատրաստական աշխատանքները տևելու են մոտ 1,5 ամիս:

Հանքային գոտիների բացման, ալուվիալ-դելուվիալ նստվածքների, հանքային մարմինների երակների ու գոտիների հզորությունը, դրանց տարածման և բաշխման օրինաչափությունները և հանքայնացման համասեռությունը ճշտելու, ինչպես նաև նմուշարկման և մարմինների մորֆոլոգիան պարզելու նպատակով նախատեսվում է վերգետնյա լեռնային փորվածքների (հետախուզաառուների) անցում: Քանի որ ըստ նախնական ուսումնասիրությունների տվյալների տեղամասերում ալուվիալ-դելուվիալ, փուխր բեկորային, ճեղքավորված, ապարների հզորությունը տատանվում է 0.45- 8.5մ սահմաններում, տեղ-տեղ մինչև 9.45մ, ուստի հետախուզափորվածքների անցումը IV-VIII կարգի ամրության ապարներով նախատեսվում է իրականացնել ձեռքի աշխատանքի օգնությամբ:

Ծրագրով նախատեսվում է հետախուզաառուների անցում, որոնց խորությունը նախատեսվում է ընդունել 2մ, լայնությունը 1մ, 1000գծ.մ ընդհանուր երկարությամբ: Հետախուզաառուները նախատեսվում է անցնել հանքայնացված գոտիների և մարմինների տարածման ուղղահայաց ուղությամբ: Հայցվող տարածքում ընկերությունը նախատեսում է անցնել մոտ 1000 գծ/մ ընդհանուր երկարությամբ հետախուզառու /1x2x1000=2000մ^3 ծավալով/ և 100 գծ.մ մերկացումներից նմուշարկում: Նմուշարկումը կատարվելու ակոսային եղանակով՝ 5x10x100սմ հատույթով, ընդհանուր նմուշների քանակը կկազմի 350: Աշխատանքների հստակ տեղադիրքը կորոշվի վերը նկարագրված աշխատանքների արդյունքում՝ հաշվի առնելով ջրաէկոհամակարգերի սանիտարական գոտիների պահպանման օրենսդրական պահանջները՝ բոլոր վերգետնյա փորվածքները նախատեսելով ջրային մարմիններից մինչև 32 մետր հեռավորության վրա: Նմուշարկումից անմիջապես հետո բոլոր լեռնային փորվածքների տարածքները ամբողջ ծավալի չափով ենթակա են վերականգնման: Վերականգնման ենթակա հողաշերտի ծավալը կկազմի 1000 x 0,20 = 200 մ^3:

Հորատահրապարակների և ճանապարհների պատրաստման աշխատանքների վերջնական ծավալը, քանակն ու տեղադիրքերը կորոշվեն միայն վերը նկարագրված աշխատանքների արդյունքում, հաշվի առնելով ջրաէկոհամակարգերի սանիտարական գոտիների պահպանման օրենսդրական պահանջները՝ բոլոր հորատահրապարակները նախատեսելով ջրաէկոհամակարգի տարածքից առնվազն 32 մետր հեռավորության վրա: Հորատումը նախատեսված է ժամանակակից եռասյունակային հորատման սարքավորումներով, որոնց և լրացուցիչ սարքավորումների տեղադրման համար կպահանջվի 8x5մ2 հրապարակ: Քանի որ հրապարակները հանդիսանալու են նաև շրջադարձի և բեռնաթափման տեղեր, ուստի մեկ հրապարակի համար կպահանջվի 10x5=50 մ^2 մակերես, իսկ 20 հրապարակի համար ընդհանուր մակերեսը կկազմի 1000 մ^2: Նշված մակերեսում վերակաանգնման ենթակա հողաշերտի ծավալը կկազմի՝ 1000 x 0,20 = 200մ^3:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեռնային ճանապարհները բացակայում են և տարածքը միջին և բարձր լեռնային, մեծ թեքությամբ լանջերով է, անհրաժեշտ կլինի վերաբացել և կառուցել ճանապարհ: Ծրագրով նախատեսվում է նորոգել 15 կմ երկարությամբ ճանապարհը և բացել 3 կմ երկարությամբ նոր մատույցային ճանապարհ՝ դեպի հորատման հարթակներ: Այդ աշխատանքների ապահովման համար անհրաժեշտ 9000 մ^2 մակերեսում վերականգնման ենթակա հողաշերտի ծավալը կկազմի 1800 մ^3:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Սյունակային հորատանցքերի միջին խորությունը կկազմի 250մ, /հորատանցքերի 10-20 քանակի դեպքում՝ հորատանցքերի երկարությունը կկազմի՝ 2500-5000 գծ.մ/: Հորատման աշխատանքները նախատեսված է կատարել 20 հորատահրապարակներում՝ տարբեր ազիմուտներով և անկյուններով: Հորատումը նախատեսված է ժամանակակից եռասյունակային և երկսյունակային հորատման սարքերով («Atlas Copco CS 14» կամ նմանատիպ հորատող մեքենան): Հորատումը կատարվելու է միայն PQ (122.6մմ), HQ(96.0մմ) և NQ(75.7մմ) տրամագծերով, ստացվում են հորատահանուկներ համապատասխանաբար՝ 85.0մմ, 63.5մմ և 47.6 մմ տրամագծերով:

Հանքային գոտիներում և մարմիններում հորատահանուկի ելքը պետք է լինի 98% -ից ոչ պակաս, իսկ ներփակող ապարներում՝ յուրաքանչյուր երթում 90%-ից ոչ պակաս: Հորատման աշխատանքները կատարվելու են կապալառու ընկերության կողմից: Բոլոր հորատանցքերում հորատման ավարտից հետո կատարվել են ինկլինոմետրական չափումներ, որից հետո կկոնսերվացվեն համապատասխան չափանիշներով: Հորատաբերանները համարակալվելու են, կամրացվեն ամրակապ խողովակով, այնուհետև կցեմենտապատվեն՝ բացառելու նպատակով փլուզումները, ինչպես նաև կանխելու նպատակով մակերևույթային ջրերի ներթափանցումը:

Բոլոր հորատահանուկները յուրաքանչյուր հերթափոխից հետո կտեղափոխվեն ընկերության երկրաբանական տեղամաս, որտեղ դրանք կենթարկվեն գեոտեխնիկական փաստագրման (հանուկի ելք, ամբողջական հանուկների ելք, ճեղքավորվածություն և այլն) և հորատահանուկների արկղերը կենթարկվեն համապատասխան նշագրման: Հետազոտությունների կենթարկվեն ընդհանուր առմամբ 33 քիմիական տարր: Հետազոտման ենթակա նմուշների ամբողջ քանակը կկազմի՝ բեկորային - 1000 նմուշ, երկրաքիմիական – 4300 նմուշ, ակոսային - 350 նմուշ, հորատահանուկային -5000 նմուշ, անալիտիկ հսկողական–400 նմուշ: Ընդամենը - 11050նմուշ: Ստացված բոլոր նմուշները (հանուկային, կրկնակ, «դատարկ», ստանդարտ) և ծավալային զանգվածի համար վերցված նմուշները ենթարկվելու են լաբորատոր հետազոտությունների «ALS ROMANIA SRL» միջազգային լաբորատորիայում: Կատարվելու է նաև հանքանյութի միներալոգիական կազմը որոշող (շլիֆ) և ապարների պետրոգրաֆիկական կազմը որոշող (անշլիֆ) աշխատանքներ՝ ընդհանուր 20 նմուշ: Ծրագրով, հիմնական աշխատանքներին զուգընթաց, նախատեսվում է կատարել նաև ռադիոակտիվ տարրերի չափումներ: Դաշտային աշխատանքների ընթացքում պարբերաբար (15-20 օրը մեկ) նախատեսվում է իրականացնել ռադիոչափիչ (СРП-68-02) էտալոնացում և զգայունության ստուգում:

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրությունները կկատարվեն վերը նկարագրված որոշակի աշխատանքների դրական արդյունքների դեպքում: Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հանքային հորիզոնները ջրարբի դարձնող հիմնական ջրատար հորիզոնները, ուսումնասիրել ջրի որակը և կատարել ռեժիմային դիտարկումներ:

Սույն ծրագրով նախատեսված երկրաբանական որոնողահետախուզական աշխատանքները ավարտելուց հետո, աշխատանոցային աշխատանքների միջոցով կկատարվի ամբողջ փաստացի նյութերի ընդհանրացում և համակարգում:Դրական արդյունքներ ստանալու դեպքում կկատարվի հանքավայրի տեխնիկա-տնտեսական գնահատում և պաշարների հաշվարկ, ինչը կներկայացվի ՕՀՊԳ փորձաքննության:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հողային ծածկույթը կխախտվի հետախուզառուների, մաքրվածքների և հետախուզահորերի անցման հետևանքով, հորատման հրապարակների կահավորման, ինչպես նաև նոր ճանապարհների կառուցման ժամանակ: Դիտարկվող տարածաշրջանում տարածված են

COMMISSION OF EXPERTS

լեռնամարգագետնային, մարգագետնատափաստանային, և լեռնատափաստանային և մարգագետնային սևահողերը, բերրի շերտի միջին հզորությունը կազմում է 0,2 մ: Տարածքում խախտվող հողերի ընդհանուր մակերեսը կկազմի 10500 մ², այդ թվում՝ հրապարակ-1000 մ² /200 մ³ ծավալով/, ճանապարհ - 9000 մ² /1800 մ³ ծավալով/, բաց լեռնային փորվածքներ-1000մ² /200 մ³ ծավալով/: Աշխատանքների ընթացքում հողի բերրի շերտի ամբողջ՝ 2200 մ³ ծավալը հանվելու և ժամանակավոր պահեստավորվելու է՝ հետագայում հրապարակների ռեկուլտիվացիայի համար օգտագործելու նպատակով:

Ծրագրի շրջանակներում Վայոց Ձորի հնագիտական հուշարձանները ուսումնասիրող արշավախմբի կողմից ուսումնասիրվող տարածքում կատարվել են հնագիտական ուսումնասիրություններ: Դաշտային աշխատանքների ընթացքում փաստագրված և մշակված հնագիտական ողջ տեղեկատվությունը պետք է ուղարկվի ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ վերջնական եզրակացության և հաստատման:

Նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցություն կրող կենսաբազմազանության և էկոհամակարգերի վերաբերյալ ՇՄԱԳ-ում ներկայացվել են ելակետային տվյալներ և վերլուծվել է տվյալ տարածաշրջանի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը /հաշվի առնելով ոլորտը կարգավորող իրավական ակտերը/: Հատուկ ուշադրություն է սևեռվել տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների առկայությանը և անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների մշակմանը՝ ուղղված կենսաբազմազանության պահպանությանը:

Վարդենիսի հանքային երևակման համար հայցվող տարածքը անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Տեղամասից դեպի արևելք և հարավ-արևելք գտնվում է <<Ջերմուկի ջրաբանական>> պետական արգելավայրը /հեռավորությունը 500մ/, դեպի հարավ՝ <<Հերհերի նոսրանտառային>> պետական արգելավայրը /հեռավորությունը 7.5 – 8.0 կմ/, դեպի հարավարևելք՝ <<Եղեգիս>> պետական արգելավայրը /հեռավորությունը 7.5 – 8.0 կմ/: Վարդենիսի լեռնաշղթայի հուսիսային լանջերը Սևանա լճի ջրհավաք գոտին է և գտնվում է <<Սևան ազգային պարկի>> պահպանման գոտում: Հատկացված տարածքի եզրից մինչև <<Սևան ազգային պարկի>> մոտակա հատվածը՝ ավելի քան 10 կմ է: Հաշվի առնելով ԲՀՊՏ-ների հեռավորությունը Վարդենիսի հանքային երևակման համար հայցվող տարածքից, կարելի է փաստել, որ նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքները ազդեցություն չեն ունենա արգելավայրերի վրա:

«ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի կողմից Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման երկրաբանահետախուզական ուսումնասիրության աշխատանքների տեղամասերի կորդինատներով սահմանազատված տարածքները չեն համընկնում Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) և ՀՀ բնապահպանության նախարարության (այժմ՝ շրջակա միջավայրի նախարարություն) ջանքերով Այն իրականացվող «Էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն» տարածաշրջանային ծրագրի հետ: Ծրագրի մասին ամբողջ տեղեկատվությունը, արդյունքները, ինչպես նաև էկոլոգիական միջանցքի քարտեզը (South Eastern Lesser Caucasus Eco-Corridor) / ներկայացված է https://www.ecfcaucasus.org/armenia /կայքում:

Դիտարկվող տարածքում է գտնվում ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն որոշմամբ հաստատված «Գետիկվանքի» բրածո ֆլորա բնության հուշարձանը (երկրաբանական հուշարձան), որի պահպանության նպատակով նախատեսվել են հատուկ միջոցառումներ, մասնավորապես մինչև աշխատանքների սկսելը ՇՄՆ համապատասխան մասնագետների հետ համատեղ «Գետիկվանքի» բրածո

COMMISSION OF EXPERTS

ֆլորա բնության հուշարձանի շրջակայքով կառանձնացվի պահպանման գոտի՝ (նվազագույնը՝ 500մ), որտեղ կբացառվի ցանկացած աշխատանք, ինչպես նաև կտեղադրվեն նախազգուշացնող վահանակներ:

Մինչև հետախուզափորվածքների անցկացումը, հորատահարթակների կառուցումը և ճանապարհների վերակառուցումը, ընտրված տեղամասերը պետք է հետազոտվեն բուսաբանների և կենդանաբանների կողմից: Կենսաբազմազանության ուսումնասիրությունները հնարավորություն կընձեռեն հայտնաբերելու ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բույսերն ու կենդանիները, նրանց աճելավայրերն ու ապրելավայրերը, բներն ու որջերը: Հայտնաբերման դեպքում նախատեսվող աշխատանքների տեղամասերը կտեղափոխվեն (թույլատրելի սահմաններում): Նախատեսվող աշխատանքների բնույթը թույլ է տալիս աշխատանքները կազմակերպել և իրականացնել այն վայրերում, որտեղ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի ու կենդանիների աճելավայրեր ու ապրելավայրեր չլինեն, իսկ հայտնաբերված տարածքները կառանձնացվեն որպես պահպանվող գոտիներ և օրենքով սահմանված կարգով կտեղեկավցեն համապատասխան գերատեսչություններին: Արդյունքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի ու կենդանիների վրա բացասական ազդեցությունները կկանխարգելվեն:

Բուսական աշխարհին մեծապես կարող է վնասել ծանր տեխնիկական միջոցների երթևեկությունը, երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում բացառվելու է տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տարածքներից դուրս տարածքներում:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա ազդեցությունները մեղմելու համար նախատեսվում է ամբողջ երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը, հետախուզափորվածքների վրայով մարդկանց և կենդանիների անվտանգ անցումը ապահովելու նպատակով ըստ անհրաժեշտության տեղադրել կամրջակներ:

Երկարաբանհետախուզական աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը և սարքավորումները դառնալու են վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր: Փոշու արտանետումներ կանխատեսվում եմ հորատման հրապարակների շինարարության, առուների և հետախուզահորերի անցման, ճանապարհների վերանորոգման և կառուցման, ինչպես նաև աշխատանքները սպասարկող ավտոտրանսպորտի տեղաշարժման ժամանակ:

Երկրաբանական աշխատանքների տեխնոլոգիական ցիկլում նախատեսված չէ վնասակար, շրջակա միջավայրի նկատմամբ ագրեսիվ նյութերի կիրառում: Հորատման աշխատանքները կազմակերպվելու են հորատման լուծույթի օգտագործման փակ շղթայով: Կիրառվող հորատման լուծույթը պատրաստվելու է հատուկ տակառներում, կիրառումից հետո հատուկ խողովակով մոտեցվելու է վիբրացիոն մաղերի մոտ, հորատման շլամը տարանջատվելու է, իսկ հեղուկ զանգվածը ուղղվելու է պարզեցման տարողություն, որտեղից նորից օգտագործվելու է լուծույթի պատրաստման համար:

Գործունեության համար խմելու ջուրը բերվելու է ստերիլ տարրաներով, իսկ տեխնիկական ջուրը կիրառվելու է հորատման գործընթացում կիրառվող պոլիմերի լուծման համար, հեղուկի ծախսը կախված է գրունտից, ուստի հնարավոր չէ նշել տեխնիկական ջրի ծախսի ճշգրիտ քանակ: Սակայան տեխնիկական ջրօգտագործման համար ձեռք է բերվելու ջրիգտագործման թույլտվություն: Աշխատանքների ընթացքում կիրառվելու է շարժական ավտոնոմ զուգարանախցիկ, ինչը թույլ է տալիս բացառել կենցաղային կոյուղաջրերի առաջացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Երևակման տարածքում հողային ծածկույթի վրա դրսևորվող բացասական ազդեցությունները կապված են մակերեսային լեռնային փորվածքների անցման, հորատման հրապարակների և ճանապարհների կառուցման հետ: Փորվածքների անցման և հորահրապարակի կառուցման ժամանակ բերրի շերտը /որի հզորությունը տարածքում կազմում է 0,2 մ/ պետք է հանվի և կուտակվի անմիջապես աշխատանքի վայրի հարևանությամբ: Բաց լեռնային փորվածքները բնապահպանական և անվտանգության (մարդկանց և կենդանիների) նկատառումներից ելնելով՝ փաստագրումից, ֆոտո-փաստագրումից և նմուշարկումից անմիջապես հետո վերականգնվելու են: Հրապարակները և ճանապարհների վերականգնումը կկատարվի հորատումից հետո: Աշխատանքները կատարվելու են ձեռքով:

Մակաբացման ապարները որպես ընդերքօգտագործման թափոն չեն դիտարկվում, քանի որ մակերևութային փորվածքի անցումից, հորատումից, փաստագրումից և նմուշարկումից անմիջապես հետո կատարվելու են հետլցման և ռեկուլտիվացման աշխատանքները:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- նավթամթերքների անհրաժեշտ քանակի պահեստավորում անթափանց տակատներով՝ աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում և վառելիքի լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքների կատարում համապատասխան ծառայություն մատուցող կայանում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար պայմանագրային հիմունքներով մասնագիտացված ընկերություններին հանձնում,
- հնամաշ դետալների ու մասերի /որպես մետաղական ջարդոն/ հավաքում և պայմանագրային հիմունքներով հանձնում վերամշակող ընկերությանը:
- մեքենաների, հորատման հաստոցի, այլ սարքավորումների շահագործում տեխնիկական սարքին վիճակում,
- փոշենստեցման նպատակով ճանապարհների ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին,
- կեղտաջրերի հավաքում շարժական զուգարանահանգույցում, որը կդատարկվի հատուկ ծառայության ուժերով,
- աշխատակիցների կենցաղային պայմանների (հանդերձարան, ջրցուղարան) կազմակերպում և ապահովում աշխատանքային խմբի տեղակայման վայրում իսկ հանգստի կազմակերպման նպատակով շարժական վագոն-տնակի տեղադրում,
- մակերևութային փորվածքների անցման և հորատման հրապարակների շինարարության ժամանակ հողի բերրի շերտի հեռացում ու կառավարում ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային տոպրակների մեջ (մինչև 35լ տարողությամբ), ընկերության սեփական ավտոտրանսպորտով տեղափոխում մոտակա աղբավայր,
- առաջացող թափոնների (պողպատե թագագլխիկներ, օգտագործված դիզելային և բենզինային շարժիչների յուղեր և քսուկներ) անվտանգ կառավարում և հանձնում թափոնը վերամշակող համապատասխան կազմակերպություններին,
- օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման նպատակով, աղմուկի և թրթռումների վերահսկողություն՝ սահմանային թույլատրելի մակարդակը ապահովելու համար,

ՀՀ ԲՆՕՍՊԵՐՏԻԶԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

• «ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում /որոնք ներառված են Հայտում/

• աշխատակիցների համար դասընթացների կազմակերպում՝ տարածքին բնորոշ էնդեմիկ և ՀՀ կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ մանրակրկիտ տեղեկատվության տրամադրման համար:

• բոլոր հետախուզական փորվածքները և հորատման հարթակները տեղադրվել այնպես, որ բացառվի ծառահատումները,

• սահմանամերձ հատվածում աշխատանքների իրականացման համար ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան թույլտվությունների/համաձայնությունների ստացում:

• մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր օգտագործում, որոնք կհամապատասխանեն անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ;

2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ (չֆիքսված կետում, ըստ նպատակահարմարության);

3. հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ աշխատանքների իրականացման վայրում՝ եռամսյակային կտրվածքով:

4. կենսաբազմազանության ուսումնասիրություն (տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն) երևակման և հարակից տարածքներում);

5. երևակման տարածքով հոսող ջրային ռեսուրսների մոնիթորինգ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ (հայցվող տարածքի արտաքին եզրագծին):

Նմուշների լաբորատոր հետազոտությունները նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Տարեկան կտրվածքով մշտադիտարկումների իրականացման համար հատկացվելու է մոտ 2 840000 ՀՀ դրամ:

Լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացման նախահաշիվը գնահատվել է 6516360.5 ՀՀ դրամ դրամ, որը ներառում է տեխնիկական և կենսաբանական փուլերի աշխատանքների միջոցառումների համար նախատեսված ծախսերը: Տեղանքին բնորոշ բուսատեսակներից սերմահավաքի կազմակերպման և ցանքի համար նախատեսված աշխատանքների արժեքը կկազմի՝ 600000 դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների կանխարգելման, կամ մեղմացման նպատակով նախատեսված միջոցառումները /ներառյալ՝ երևակման տարածքում աշխատանքային միջավայրի անվտանգության ապահովման և հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված միջոցառումները/ ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայտի վերաբերյալ անցկացվել են հանրային քննարկումներ: 2-րդ քննարկման մասնակիցները անդրադառնալով ուսումնասիրության աշխատանքներին, դեմ են արտահայտվել հետագա՝ հնարավոր արդյունահանման աշխատանքներին:

Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Վայոց ձորի մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, ԿԳՄՍ նախարարությունները, կադաստր կոմիտեն, ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և Հայտի լրամշակումներում: Գործընթացի մասնակիցների կողմից ներկայացվել է մասնագիտական կարծիքներ և հիմնավորումներ Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ: Մասնավորապես, Հայտին կից փաստաթղթերի փաթեթում՝ Հավելվածների ձևով ներկայացվել են.

- Ջրաերկրաբան, երկր.գիտ. թեկնածու Ա.Հ. Աղինյանի հաշվետվությունը՝ տեղամասի ջրաերկրաբանական պայմանների և ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա երկրաբանական-հետախուզական աշխատանքների հնարավոր ազդեցությունների վերաբերյալ: Հաշվետվությունում նշվում է, որ Ծրագրով նախատեսված երկրաբանական երթուղիների անցումը, երկրաբանաքարտեզագրական, երկրաքիմիական ուսումնասիրության աշխատանքները և հորատման աշխատանքները (որոնք իրականացվելու են մինչև 250 մ խորությամբ և փոքր տրամագծի թագագլխիկներով՝ 75.7մմ - 122.6մմ) չեն կարող ազդել ջրային ռեսուրսների, մասնավորապես՝ ստորերկրյա ջրերի որակական և քանակական ցուցանիշների վրա: Հաշվետվությունում առաջարկել է միջոցառումներ, ուղղված՝ ուսումնասիրության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի (ջրային ռեսուրսներ վրա հնարավոր ազդեցությունների կանխարգելմանը:
- ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահ Բ. Գաբրիելյանի կարծիքը, որում նշվել է, որ Վայոց Ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության փուլի աշխատանքները անմիջական վտանգ չեն ներկայացնում տարածաշրջանի շրջակա միջավայրի և Սևանա լճի էկոհամակարգի համար, սակայն ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը չի կարող երաշխավորել հետագա դրական եզրակացությունը արդյունահանման աշխատանքների վերաբերյալ,
- Ուսումնասիրվող տարածքում կատարված հնագիտական ուսումնասիրությունների մասնագիտական եզրակացությունը, համաձայն որի՝ կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների համար նախատեսված ծրագրի իրականացումը հնագիտական և պատմա-մշակութային առումով ունի կառավարելի ռիսկեր, քանի որ աշխատանքները կատարվելու է ոչ մեծ մակերեսով տարածքում՝ առանց պայթեցման աշխատանքների: Այնուհանդերձ տարածքում ցանակացած հողային աշխատանք պետք է համաձայնեցվի հնագետի հետ և իրականացվի հնագետի վերահսկողությամբ:

Փորձաքննական գործընթացում Վայոց ձորի մարզպետարանի կողմից ներկայացվել է բացասական դիրքորոշում՝ նկատի ունենալով «Էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն» տարածաշրջանային ծրագրի հետ ուսումնասիրվող տարածքների հետ համընկնումը և ջրային ռեսուրսների քանակի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը /ջրային ռեսուրսների վերաբերյալ հիմնավորումները ներկայացված են ջրաերկրաբան, երկր.գիտ. թեկնածու Ա.Հ. Աղինյանի հաշվետվությունում/: Իսկ «ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի կողմից Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման

երկրաբանահետախուզական ուսումնասիրության աշխատանքների տեղամասերի կորդինատներով սահմանազատված տարածքները չեն համընկնում Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) և ՀՀ բնապահպանության նախարարության (այժմ՝ շրջակա միջավայրի նախարարություն) ջանքերով իրականացվող «Էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն» տարածաշրջանային ծրագրի հետ: Ծրագրի մասին ամբողջ տեղեկատվությունը, արդյունքները, ինչպես նաև էկոլոգիական միջանցքի քարտեզը (South Eastern Lesser Caucasus Eco-Corridor) / ներկայացված է https://www.ecfcaucasus.org/armenia /կայքում: Պետք է նշել, որ Վարդենիսի հանքային երևակման համար հայցվող տարածքը անմիջական սահմաններ չունի տարածարջանի ԲՀՊՏ-ների հետ:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները և ելնելով վերոնշյալ հիմնավորումներից, կարելի է եզրահանգել, որ երկրաբանական աշխատանքները անմիջական վտանգ չեն ներկայացնում տարածաշրջանի շրջակա միջավայրի բաղադրիչների /հող,ջուր, օդ, կենսաբազմազանություն/ և սոցիալական միջավայրի համար: Երկրաբանական ուսումնասիրության Ծրագրով նախատեսված աշխատանքների ժամանակ Հայտում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում և ստորև բերված փորձաքննական պահանջների կատարումն ապահովելու դեպքում շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկանխարգելվեն, կամ կնվազեցվեն: Դրական եզրակացությունը տրվում է միայն Երկրաբանական ուսումնասիրության փուլի համար՝ հաշվի առնելով վերոնշյալ մասնագիտական կարծիքները և հիմնավորումները:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնել չվնասելով էկոհամակարգերը և առաջնորդվել ՀՀ ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 20-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Կառավարության 20 հունվարի 2005 թվականի թիվ 64-Ն «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» որոշման պահանջներով:
2. Հողի բերրի շերտի հեռացման և պահպանման հետ կապված միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ Կառավարության 02.11.2017 թվականի թիվ 1404-Ն և 08.09.2011 թվականի թիվ 1396-Ն որոշումների պահանջներին համապատասխան:
3. Աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով և ՀՀ կառավարության՝ 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն, 2010 թվականի հունվարի 29-ի <<ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին>> N71-Ն և N72-Ն և 2014 թվականի օգոստոսի 14-ի N781-Ն որոշումների պահանջներով, ապահովելով՝ «Գետիկվանքի» բրածո ֆլորա բնության հուշարձանի (երկրաբանական հուշարձան) և ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների պահպանության համար Հայտում նախատեսված միջոցառումները:
4. Քանի որ երկրաբանական երթուղիները /առուները/ կարող են առաջացնել լանջերի էրոզիոն երևույթներ, որպես կարևոր պայման անհրաժեշտ է՝ ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո առուները վերականգնել կավային գրունտներով:
5. Սյունակային հորատումն /20 հատ հորատանցքերով/ իրականացնել հիդրոերկրաբանական ուսումնասիրության արդյունքների առկայության պարագայում՝

թույլ ջրատար-ջրամերժ հիդրոերկրաբանական ստորաբաժանումների տարածման տեղամասերում:

6. Ստորերկրյա ջրերի հնարավոր աղտոտումը կանխարգելելու համար, հորատման աշխատանքների ավարտից հետո հորատանցքերը պարտադիր պետք է լուծարվեն և կոնսերվացվեն՝ Հայտում ներկայացված միջոցառումներին համապատասխան:

7. Տեխնիկական նպատակով ջրօգտագործումն իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

8. Աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018թ. N 191–Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային ծածկույթ, մթնոլորտային օդ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, բուսական ծածկույթ և կենդանական աշխարհ/ մշտադիտարկումներ և արդյունքների հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

9. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և դրանց ժամանակացույցերը, ինչպես նաև Ընկերության կողմից Եղեգիս համայնքում և Վարդահովիտ բնակավայրում նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

10. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»: Հողային աշխատանքներն անհրաժեշտ է հնագետի հետ համաձայնեցված՝ վերջինիս վերահսկողությամբ:

11. Աշխատանքներն իրականացնելիս պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հերիքնազ Մկրտչյան